ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

" 23" նոյեմբերի 2021 թ.
ՈՐՈՇՈՒՄ N 65

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 17.05.2021թ. թիվ 112 եզրակացությունը, Սարահարթ համայնքի ավագանու 09.07.2021թ. թիվ 26-Ա որոշումը, և «Արմենտել» ՀՁ ՓԲ ընկերության դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0131-0001 ծածկագրից 0.0240 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության կապի հողերի գործառնական նշանակության:
2. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0131-0001, ծածկագրից 0,02400 հողամասում ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, արտաքին չափերով 114,5 քմ բջջային շարժական կայանի հարթակները:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա.Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

" 23" նոյեմբերի 2021 թ.
ՈՐՈՇՈՒՄ N 66

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 17.05.2021թ. թիվ 112 եզրակացությունը, Սարահարթ համայնքի ավագանու 09.07.2021թ. թիվ 26-Ա որոշումը և ՄՏՍ Հայաստան ՓԲԸ-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0131-0001, ծածկագրից 0.0210 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության կապի հողերի գործառնական նշանակության:
2. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0131-0001, ծածկագրից 0,02100 հողամասում ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, արտաքին չափերով 118,05 քմ բջջային շարժական կայանի հարթակները:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա.Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 նոյեմբերի 2021թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 67

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներից, հաշվի առնելով Արմեն Հարությունյանի դիմումը

որոշում եմ.

1. Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097-0018-0015 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.11 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա կառուցված տունը հասցեավորել 2 փողոց, 2 նրբ. թիվ 4:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 նոյեմբերի 2021թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 68

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով, 2006թ մայիսի 18-ի N912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ կառույցներիի պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, շենքի տեխնիկական վիճակը բավարար է անվտանգ շահագործման համար, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ «Հողային Օրենսգրքի» 60-րդ հոդվածով ընդգրկված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Տիգրան Ռազմիկի Մարկոսյանի դիմումը՝

Որոշում եմ

1. Լոռու մարզի Սարահարթ համայնքի 7-րդ փողոց, թիվ 18 հասցեում գտնվող Տիգրան Ռազմիկի Մարկոսյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող 06-097-0011-0013 կադաստրային ծածկագրով, 0.2155հա տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 72.55 քմ արտաքին մակերեսով նկուղը, 6.2քմ արտաքին մակերեսով աստիճանահարթակը, 125.44քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 32.88քմ արտաքին մակերեսով բաց պատշգամբը օրինականացնել (1 քմ-ը 440 ՀՀ դրամով): 19.95քմ արտաքին չափերով զրուցարանը, 6.6քմ և 10.4քմ մակերեսներով պարիսպները օրինականացնել (1 քմ-ը 264 ՀՀ դրամով): Ճանաչել հողամասի սեփականատերեր Տիգրան Ռազմիկի Մարկոսյանի, Մարգարիտ Վահանի Մկրտչյանի, Ահարոն Տիգրանի Մարկոսյանի, Տարոն Տիգրանի Մարկոսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը օրինականացված 72.55 քմ արտաքին մակերեսով նկուղի, 6.2քմ արտաքին մակերեսով աստիճանահարթակի, 125.44քմ արտաքին մակերեսով բնակելի տան, 32.88քմ արտաքին մակերեսով բաց պատշգամբի, 19.95քմ արտաքին չափերով զրուցարանի, 6.6քմ և 10.4քմ մակերեսներով պարիսպների նկատմամբ:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման ենթակա վճարը կազմում է 114100 (Մեկ հարյուր տասչորս հազար հարյուր) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում վճարել Սարահարթ համայնքի վարչական եկամուտների 900245172144 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ու պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 նոյեմբերի 2021թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 69

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներից, հաշվի առնելով Տիգրան Մարկոսյանի դիմումը

որոշում եմ.

1. Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097-0011-0013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.2155 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա կառուցված շինությունները հասցեավորել 7 փողոց, թիվ 18:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ